

Luys Lnyu®




ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային,
2018-2019թթ., %**



Տնտեսական ակտիվության ցուցանիշը տարեսկզբից ցուցաբերում է աճի արագացման միտում, որը սակայն հունվար-մայիս ամիսներին կայունացել է, կազմել 7.3 տոկոս և նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ցածր է 1.2 տոկոսային կետով: Մայիս ամսվա ՏԱՑ-ի աճը նախորդ տարվա մայիսի նկատմամբ նույնպես կազմել է 7.3 տոկոս:


Նախորդ ամիսներին հրապարակված ՏԱՑ-երի վերանայումները շարունակվել են նաև այս ամիս: Մասնավորապես՝ հունվար-մարտ ամիսների կուտակային ՏԱՑ-ը ապրիլին հրապարակվել էլ 6.5 տոկոս, այնուհետև այն վերանայվեց դեպի ներքև՝ դառնալով 6.2 տոկոս, այժմ կրկին 6.5 տոկոս է: Հունվար-ապրիլ ամիսների ՏԱՑ-ը 7.0 տոկոսից դարձել է 7.3, իսկ հունվար ամսվա ցուցանիշը կրկին դարձել է 5.5 տոկոս:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ակտիվության ցուցանիշի աճին առավելապես նպաստել է ծառայությունների ոլորտը (7.5 տոկոսային կետով): Աճին նպաստել են նաև առևտրի (1.2 տոկոսային կետ), արդյունաբերության (1.1 տոկոսային կետ) և շինարարության (0.4 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը:

Հունվար-մայիս ամիսների գյուղատնտեսության աճը չի հրապարակվել, հունվար-մարտ ամիսների տվյալներով գյուղատնտեսության ոլորտի թողարկումը նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 0.2 տոկոսով, իսկ նպաստումը ՏԱՑ-ին գրեթե զրոյական է եղել:

Գծապատկեր 2. Տնտեսության ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2019թ. հունվար-մայիս, %



1

*Գյուղատնտեսության ցուցանիշն այսուհետ հրապարակվելու է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:


Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



2019 թվականի հունվար-մայիս ամիսներին արդյունաբերության թողարկման ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 5.6 տոկոսով: 2018թ. նույն ցուցանիշը կազմել էր 3.4 տոկոս:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




Շինարարության ծավալի աճի տեմպը 2019թ. սկզբում բավական բարձր էր, սակայն այն աստիճանաբար դանդաղում է: Առաջին հինգ ամիսներին շինարարության աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 6.1 տոկոս, ինչը 11.3 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տնտեսության կառուցվածքում նախորդ տարվա ամենաարագ աճող ճյուղը՝ ծառայությունները, 2019թ. հինգ ամիսների ընթացքում 2018թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 16.5 տոկոսով, որը 0.9 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա ցուցանիշը (17.4%):

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, 2018-2019թթ.,%



Ծառայությունների կառուցվածքում ամենամեծ նպաստում ունեցողը շարունակում է մնալ մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտը, որը հունվար-ապրիլ ամիսների տվյալներով ծառայությունների աճին նպաստել է 7.8 տոկոսային կետով: Աճին դրականորեն են նպաստել նաև ծառայությունների մյուս գրեթե բոլոր ենթաճյուղերի աճերը, որոնցից նշանակալի են եղել ֆինանսական և ապահովագրական գործունեության (4.3 տոկոսային կետով), կացության և հանրային սննդի կազմակերպման (1.7 տոկոսային կետով) ոլորտներում մատուցված ծառայությունների նպաստումները (տե՛ս Աղյուսակ 1):


Աղյուսակ 1. Ծառայությունների կառուցվածքը և նպաստումները, 2019թ. հունվար-ապրիլ²

	2018 մլն դրամ	2019 մլն դրամ	Կշիռը, 2018թ. %	Աճ, %	Նպաստում, %
Ընդամենը	487,107.7	575,503.9	100.0	117.0	17.0
Կացության և հանրային սննդի կազմակերպում	28,948.8	37,933.6	5.9	129.4	1.7
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	99,720.2	140,714.0	20.5	138	7.8
Կրթություն	17,795.6	19,523.0	3.7	108.3	0.3
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	20,875.3	26,082.8	4.3	120.1	0.9
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	18,075.6	18,889.6	3.7	103.3	0.1
Տեղեկատվություն և կապ	76,895.4	82,775.7	15.8	106.8	1.1
Տրանսպորտ	63,622.9	65,705.5	13.1	101.6	0.2
Վարչարարական և օժանդակ գործունեություն	20,032.2	21,202.7	4.1	108.3	0.3
Մասնագիտ., գիտական և տեխ. գործունեություն	20,931.3	22,309.8	4.3	106	0.3
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	110,792.6	130,813.7	22.7	118.8	4.3
Սպասարկման այլ ծառայություններ	9,417.8	9,553.5	1.9	100.8	0.0

Ծառայությունները թեև շարունակում են մնալ տնտեսական աճին նպաստող հիմնական ճյուղը, սակայն դրանց ծավալի աճի տեմպը վերջին ամիսներին դրսևորում է կայուն նվազման միտում: Տարեսկզբին ծառայությունների աճն ավելի արագ էր, քան նախորդ տարի, սակայն այժմ պատկերը հակառակն է: Իհարկե, եթե ծառայությունների աճի տեմպի դանդաղումը փոխհատուցվի տնտեսության այլ՝ ավելի կայուն և արտադրողական ճյուղերի աճի արագացմամբ, ապա սա կարելի է դիտել որպես դրական երևույթ:

ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




² 2019թ. հունվար-մայիս ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Առևտրի շրջանառության աճի տեմպն ընթացիկ տարվա հունվար ամսին եղել է ավելի բարձր, քան նախորդ տարի, սակայն հաջորդող ամիսների կուտակային աճի տեմպը դանդաղել է: Հունվար-մայիս ամիսներին ոլորտի կուտակային աճի տեմպը կազմել է 9.4 տոկոս, որը 1.4 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Առևտրի աճերը նույնպես վերանայվել են: Այսպես՝ հունվար-մարտ ամիսների աճը 10.1-ից դարձել է 11.5, իսկ հունվար-ապրիլ ամիսներին՝ 9.8-ից դարձել է 10.8 տոկոս:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, 2018-2019թթ., %³



Արտահանման ծավալները դրսևորում են անկման տեմպի դանդաղման միտումներ: Սակայն, ամեն ամիս նախորդ ամիսներին հրապարակված արտահանման ցուցանիշները վերանայման արդյունքում բավական մեծ չափով փոփոխվում են:

Ընթացիկ տարվա առաջին 5 ամիսներին արտահանման անկումը շարունակվել է: Այսպես՝ հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահանման ծավալը նվազել է 0.9 տոկոսով:


Արտահանման ծավալների նվազմանն ամենամեծ նպաստումն է ունեցել հանքահումքային արտադրանքի արտահանման 14.8 տոկոսով կրճատումը, որը ընդհանուր արտահանման անկմանը նպաստել է 4.4 տոկոսային կետով: Նվազել են նաև ոչ թանկարժեք մետաղներ և մանածագործական իրեր ապրանքախմբերի արտահանման ծավալները, որոնք ընդհանուր արտահանմանը նպաստել են համապատասխանաբար -2.5 և -1.1 տոկոսային կետով: Արտահանման աճ է

* Ներկայացված են 2019 թվականի հունվար-մայիս ամիսների արտահանման և ներմուծման վերանայված տվյալները:

գրանցվել «թանկարժեք մետաղներ», «պատրաստի սնունդ», «սարքեր և ապարատներ» ապրանքախմբերում, որոնց դրական նպաստումն ընդհանուր արտահանմանը կազմել է համապատասխանաբար 2.2, 1.5 և 0.4 տոկոսային կետ⁴:

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, 2018-2019թթ., %




Ինչպես արտահանումը, այնպես էլ ներմուծումը, նախորդ տարվա բավական բարձր ցուցանիշից հետո, ընթացիկ տարվա սկզբից նվազում է: Հունվար-մայիս ամիսներին ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 3.4 տոկոսով: Ներմուծման ծավալների անկումը հիմնականում պայմանավորված է «սարքավորումներ», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ» ապրանքախմբերի ներմուծման նվազմամբ, որոնց նպաստումները ընդհանուր ներմուծման կրճատմանը կազմել են համապատասխանաբար -2.0 և -1.0 տոկոսային կետ:

⁴ Արտահանման կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է 2019թ. հունվար-ապրիլ ամիսների տվյալների հիման վրա, քանի որ հունվար-մայիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2018-2019թթ., հունվար-մայիս %⁵




2019թ. հունվար-մայիսին Նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.4 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 6.4 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.6 տոկոսով: Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 4.1, 1.2 և 4.8 տոկոս:

ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները 2018-2019թթ., կուտակային աճը, % (աճը նշանակում է << դրամի արժևորում)



⁵ Աշխատավարձի ցուցանիշները ներկայացված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների վերանայված տվյալներով:



2019 թվականի հունվար-մայիսին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.7 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 7.3 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 10.8 տոկոսով:

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ


Բյուջեի եկամուտներ

2019 թվականի հունվար-մայիս ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են 26.5 տոկոսով, ընդ որում՝ հարկերը և տուրքերն աճել են 26.4 տոկոսով: Միասնական հաշվի մնացորդը կազմել է 34.7 մլրդ դրամ:

Ըստ նախնական տվյալների՝ հարկային եկամուտների 2019թ. կիսամյակային պլանը հունիսի 24-ի դրությամբ արդեն իսկ գերակատարվել է մոտ 47 մլրդ դրամով:

Բյուջեի ծախսեր


Գծապատկեր 11. Պետական բյուջեի ծախսերի աճը և դրա բաղադրիչների նպաստումները, %



ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2019 թվականի հունվար-մայիս ամիսներին կազմել են 533.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 3.6%-ով, որը պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում նվազել են 37.2 տոկոսով (նպաստումը՝ -1.8 տոկոսային կետ):

Պետական բյուջեի հաշվեկշիռը


Գծապատկեր 12. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ, ժամանակահատվածի վերջի դրությամբ



2019թ. հունվար-մայիս ամիսներին ՀՀ պետական բյուջեն եղել է հավելուրդային և կազմել է 74.7 մլրդ դրամ, մինչդեռ առաջին կիսամյակում նախատեսվել էր ունենալ 78.4 մլրդ դրամ պակասուրդ: Հավելուրդը պայմանավորված է ինչպես ծախսերի թերակատարմամբ, այնպես էլ հարկային եկամուտների զգալի գերակատարմամբ:

Պետական պարտք


**Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով)
12-ամսյա աճը, %**



2019թ. մայիսի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 6,379.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճելով 3.6 տոկոսով: Պարտքի 77.1 տոկոսը՝ 4,917.2 մլն ԱՄՆ դոլարը, եղել է արտաքին պարտքը: Նախորդ ամսվա (ապրիլի վերջի) նկատմամբ կառավարության պարտքը աճել է 23.9 մլն ԱՄՆ դոլարով (0.4%-ով)՝ ներքին պարտքի աճի հաշվին, իսկ 2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ՝ 6.92 մլն ԱՄՆ դոլարով (0.11%-ով)՝ կրկին ներքին պարտքի աճի հաշվին:

Գնաճը


Գծապատկեր 14. 12-ամսյա գնաճ, %



2019 թվականի մայիսին նախորդ տարվա մայիսի նկատմամբ սպառողական գներն աճել են 2.8 տոկոսով՝ նախորդ տարվա 1.6 տոկոսի համեմատ՝ անցնելով ԿԲ-ի թիրախի ստորին սահմանը: Վերջին ամիսներին գնաճի փոքր-ինչ արագացումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսական արտադրանքի գների աճով:

Փողի զանգված և բազա

Գծապատկեր 15. Փողի բազայի 12-ամսյա աճը, %



2019թ. հունվար-մայիս ամիսներին փողի բազայի աճի տեմպը եղել է ավելի բարձր, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: Այսպես՝ 2019թ. մայիս ամսվա վերջի դրությամբ փողի բազան աճել է 22.2 տոկոսով՝ նախորդ տարվա 0.7 տոկոս աճի դիմաց:

Գծապատկեր 16. Փողի զանգվածի 12-ամսյա աճը, %




Փողի զանգվածի աճի տեմպը 2019թ. մայիսին եղել է ավելի ցածր, քան նախորդ տարի: Փողի զանգվածի աճի տեմպը նախորդ տարի ունեցել է դանդաղման միտում, սակայն ընթացիկ տարում այն դրսևորում է աճի

արագացման միտում: 2019թ. մայիսին փողի զանգվածը նախորդ տարվա մայիսի նկատմամբ աճել է 10.7 տոկոսով:


Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը 2018-2019թթ., %




2019թ. մայիսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2018թ. մայիսի նկատմամբ կազմել է 18.9 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ավանդների աճի տեմպին (2018թ. մայիսի աճը՝ 7.5%):

Գծապատկեր 18. Ավանդների 12-ամսյա աճը՝ ըստ տնտեսության հատվածների (նպաստումները), 2019թ., %



Ավանդների աճին հիմնականում նպաստել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները՝ 10.7 տոկոսային կետով և տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 6.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճին տնտեսության ճյուղերի նպաստումները, %, 2019թ. հունվար-մայիս



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. մայիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 13.3 տոկոսով, ինչին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 6.9 տոկոսային կետով, ինչպես նաև հիպոթեքային վարկերը և ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերը՝ համապատասխանաբար 2.4 և 2.2 տոկոսային կետով:

Ամփոփելով տեղեկանքը՝ առանձնացնենք մի քանի ուշագրավ դիտարկումներ.

1. Նախորդ ամիսներին հրապարակված ցուցանիշների վերանայումները շարունակվել են նաև այս ամիս: Վերանայումների արդյունքում առավել մեծ փոփոխություններ են գրանցվել արտաքին առևտրի ցուցանիշներում: Այսպիսի փոփոխությունները նվազեցնում են հրապարակված ցուցանիշների արժանահավատությունը, քանի որ հետագա հրապարակումներում դրանք նորից կարող են վերանայվել:

2. Տնտեսական զարգացման ուղղությունները նախորդ ամսվա նկատմամբ էական փոփոխություն չեն ունեցել: Բացի արդյունաբերությունից, բոլոր ճյուղերում շարունակվում է աճի տեմպի դանդաղումը: Իսկ արդյունաբերության ոլորտում նկատվում է աճի տեմպի արագացում՝ հիմնականում պայմանավորված մշակող արդյունաբերության աճով: Վերջինիս կառուցվածքում աճն ապահովում են սննդամթերքի, խմիչքների և ծխախոտի արտադրության ծավալների աճերը:

3. Ծառայությունները, թեև շարունակում են մնալ տնտեսական աճին նպաստող հիմնական ճյուղը, սակայն դրանց ծավալի աճի տեմպը վերջին

ամիսներին դրսևորում է կայուն նվազման միտում: Տարեսկզբին ծառայությունների աճն ավելի արագ էր, քան նախորդ տարի, սակայն այժմ պատկերը հակառակն է: Իհարկե, եթե ծառայությունների աճի տեմպի դանդաղումը փոխհատուցվի տնտեսության այլ՝ ավելի կայուն և արտադրողական ճյուղերի աճի արագացմամբ, ապա սա կարելի է դիտել որպես դրական երևույթ:

4. Պետական բյուջեի զսպող ազդեցությունը տնտեսության վրա շարունակվում է: Ըստ դեռևս չիրապարակված տվյալների՝ հարկային եկամուտների 2019թ. կիսամյակային պլանը հունիսի 24-ի դրությամբ արդեն իսկ գերակատարվել է մոտ 47 մլրդ դրամով: Ձևավորվել է մոտ 74.7 մլրդ դրամ հավելուրդ, որը աննախադեպ երևույթ է: Սա նշանակում է, որ հարկաբյուջետային քաղաքականությունը սպասվածից ավելի զսպող է, ինչը կարող է վտանգավոր լինել երկարաժամկետ տնտեսական աճի և մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: